«ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲՈԼՈՐ ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉՈՒԼՈՒԱԾ ԵՆ ՀԱՅԵՑԻՈՒԹԵԱՆ ՄԱՔՈՒՐ ՈՍԿՈՒՑ ԵՒ ԴԱ ՉԻ ԲԱԽՈՒՄ ԱՅԼ ԱՋԳԵՐԻ ՀԵՏ, ՔԱՆԻ ՈՐ ԻՆՉՔԱՆ ՀԱՅԵՑԻՈՒԹԻՒՆ՝ ԱՅՆՔԱՆ ՄԱՐԴԿԱՅՆՈՒԹԻՒՆ»

Սովետահայ ժամանակակից արձակին մէջ ուժեղ ներկայութիւն մըն է Հրանտ Մաթեւոսեանը, որուն անունին հետ կապուած են նոյն այդ արձակին ամենէն իրաւ նուաճումները՝ խորքի թէ ձեւի կալուածներէն ներս:

Ծնած է 1935-ին Ահնիձոր գիւղը, Լոռիի շրջանին մէջ՝ Դսեղի դրացնութեան: 15 տարեկանին ուսման գործով կու գայ Երեւան: Սկիզբը գրաշարութեամբ կը զբաղուի. անոր զուգընթաց կը հետեւի Աբովեանի անուան մանկավարժական ինստիտուտի դասընթացքներուն: Կատարած է սրբագրական եւ ապա խմբագրական աշխատանքներ, այնուհետեւ կարճ ժամանակով մեկնած է Մոսկուա՝ սեւարի դասընթացքներուն հետեւելու:

1960-էն ի վեր կը տպուի գրական մամուլի մէջ: 1967-ին լոյս տեսած է «Օգոստոս» պատմուածքներու եւ վիպակներու հատորը: Վերջերս լոյս տեսաւ «Ծառերը» ժողովածուն եւ շարք մը գործերու անգլերէն թարգմանութեան մէկ հատորեակը՝ Մոսկուայի մէջ:

Մաթեւոսեանի գործերէն թարգմանուած են նաեւ ռուսերէնի եւ բարձրօրէն գնահատուած ռուս գրաքննադատութեան եւ ընթերցողներուն կողմէ:

Գրականութեան այլազան հարցերուն շուրջ իր մտորումները, ինչպէս նաեւ գրական իր լիարժէք վաստակը մեր ընթերցողներուն ներկայացնելու առաջադրութեամբ՝ հարցազրոյցի մը համար կը ժամադրուինք հետը:

Ջերմօրէն ձեռնուելով՝ կը հրաւիրէ մեզ իր գրասենեակը: Գիրքերու դարաններուն վրայ կը տիրապետեն Յովհաննէս Թումանեանի եւ Չարենցի լուսանկարները: Շուտով վարակիչ զրոյց մը ծայր կու տայ մեր միջեւ: Խորապէս մտահոգուած է լիբանանահայութեան ճակատագրով: Ան իր մտավախութիւնը կը յայտնէ թէ լիբանանահայութեան ճգնաժամը սփիւռքահայութեան պատմական դերը վտանգելու վրայ է:

Մեր հարցարանին ծանօթանալէ ետք, ոտքի կ'ելլէ եւ կը սկսի ճեմել սեւեռակի երկայնքին: Պահ մը ինքզինք ամփոփելէ ետք՝ կը

սկսի խօսիլ: Անոր խօսքը ջղուտ է, կը խօսի խոր համոզումով եւ զսպուած յուզումով:

– Որպէս սովետահայ արձակի լիարիւն մշակներէն մէկը, որուն անունին հետ կապուած են սովետական հայ ժամանակակից արձակի շարք մը հիմնական առաքինութիւնները, ձեզմէ պիտի ուզէինք լսել ձեր սերնդակից արձակագիրներու եւ անոնց հանգանակներու ու առ հասարակ սովետահայ արձակի մասին: Ի՞նչ յաջողած գործեր լոյս տեսած են վերջին տարիներուն:

– Գուրգէն Մահարի՝ «Այրուող այգեստաններ», Աբիգ Աւագեան՝ «Հարաւային տենդ», Աղասի Այվազեան՝ «Թիֆլիս», Զորայր Խալափեան՝ «Որտեղ էիր, մարդ աստուծոյ», Մուշեղ Գալշոյեան՝ «Ձորի Միրոն», Յովհաննէս Մելքոնեան՝ «Հարցաքննութիւն», Պերճ Զէյթունցեան՝ «Քլոտ Ռոպէրտ Իզերլի», Վարդգէս Պետրոսեան՝ «Հայկական էսքիզներ»: Բոլորը միասին՝ 1600 էջ: Յաջողած էջեր եւ յաջողակ ուրիշ անուններ մոռացա՞յ: Անշուշտ: Այլապէս դուռ կը բացուէր անվերջ մի շարանի եւ անսահման մի ծաննդոյթի առջեւ: Ուստի եւ աւելի խիստ լինենք եւ վերոյիշեալ ցուցակից զատենք ըստ իս ամենատաղանդաւոր գործերը՝ «Այգեստանները», «Տենդը», «Թիֆլիսը» – երեքն էլ հեղինակների ծննդավայրերի մասին: Երեքն էլ՝ մեր ազգային երազի բզկտման մասին: «Տենդ» պատմուածաշարից Աւագեանի «Կարօտը» եւ Այվազեանի «Թիֆլիսը» ես կը դնէի քսաներորդ դարի լաւագոյն պատմուածքների ժողովածուի մէջ՝ եթէ այդպիսի ժողովածու հաւաքելու իրաւունք ինձ յանկարծ ընձեռուէր: Ինչ վերաբերում է «Այգեստաններ»ին՝ այդ գործը ես գնահատում եմ մեր կորած հայրենիքի մասին խօսք ու զրոյցի պատեհութիւն ընձեռելու համար: Ցաւով եմ ասում, որ մեր այս երեք յաջողութիւնից ոչ մէկն ունի Մինաս Աւետիսեանի որակն ու հայեցիութիւնը, բայց այս երեքն էլ որակ ու մակարդակ են հենց նոյն հայեցիութեան շնորհիւ: Խօսքը ոչ թէ վերագրովի, գրող–ընթերցող, գիրք–դահլիճ, հեղինակ–արձագանգ կապից արտածուող յաջողութեան մասին է, ինչը որ մեր շատ հեղինակների իրաւունք է տալիս իրենց համարելու յաջողակ գրողներ եւ ինչը որ որեւէ Սեգալի

(«Սիրոյ պատմութեան» հեղինակի անունը ճի՞շդ յիշեցի – Աստուած գիտի, այնինչ ընդամէնը երէկ նա գրաշուկայում առաջին հեղինակն էր) իրաւունք կը տար տպաքանակի իր բարձունքից նայել ու չճանաչել Սարոյեանին ու Ֆոլքներին,– խօսքն, այո, այս յաջողութեան մասին չէ, այլ այսպէս կոչուած դարբնոցային, խոհանոցային, ուրիշ ինչպէ՞ս ասեմ՝ որպէսզի հասկանալի լինեմ, հեղինակ–հայրենիք–հայեցիութիւն ոլորտներում արարուող յաջողութեան մասին: Թոնդրակեան աղուէսադրոշմ է թէ խաչի խարան՝ մեր գրականութեան կրծքին դեռ Խորենացու ժամանակներից է դաջուած հայրենասիրութիւն, եւ բոլորովին էլ տարօրինակ չէ, որ հազար հինգ հարիւրամեայ մեր գրականութեան փոքր ի շատէ բոլոր յաջողութիւններն են ծուլուած հայեցիութեան մաքուր ոսկուց: Սա մեր գրականութեան միակ պարտադիր պայմանն է եւ չի դիպչում, չի բախւում, չի վիրաւորում այլ շահերի եւ այլ ազգերի, քանի որ ինչքան հայեցիութիւն՝ այնքան մարդկայնութիւն, ինչքան աւելի իմ մասին՝ նոյնքան աւելի ճիշդ քո մասին, դէպի մեր խորքը, խորքը: Այսօրուայ համաշխարհային գրականութիւնը առ հասարակ աշխարհի մասին գրականութիւնից, ուրիշների մասին պատմող գրականութիւնից վերածում է խոստովանութեան, ինքնախոստովանութեան գրականութեան, իսկ խորքում բոլորս ենք մաքուր եւ մաքրութեամբ նման իրարու:

– Ինչպէս չափածոյ, նոյնպէս եւ արձակ գրական ստեղծագործութեանց պարագային կը խօսուի «հին» եւ «նոր» ըմբռնումներու եւ գրական սերունդներու, դասական–իրապաշտ եւ արդիական–ապստրաքթ, այսպէս կոչուած «նորարարական» ուղղութիւններու մասին: Ձեզի համար ինչպէ՞ս կը ներկայանայ այս հարցը: Հետաքրքրական պիտի ըլլար ձեր կարծիքը իմանալ, եթէ կարելի է այսպէս կոչել՝ իւրաքանչիւր կողմի դաւանանքի եւ գրական բերքի մասին:

– Հազար տարի ապրել քուրքի հետ նոյն տան մէջ եւ չհասկանալ որ նա քեզ մորթելու է եւ նոյնիսկ մորթելուց յետոյ էլ չհաւատալ թէ մորթուեցիր եւ աշխարհը ճանաչելու քո կարողութեամբ պարծենալով աբստրակցիոնիզմի *լեզո՞ւ*

առաջադրել,– է, սա առնուազն մանկամտութիւն է: Աբստրակցիոնիզմը *յաւակնում է խօսել բոլոր մարդկանց կամ որքան հնարաւոր է մարդկանց մեծ խմբերի մասին, բայց իրականում ոչինչ չի ասում ոչ բոլոր մարդկանց, ոչ խմբերի եւ ոչ էլ գոնէ մի մարդու մասին, քանի որ մարդը յաւերժօրէն նոր, մշտապէս անկրկնելի, անընդհատ խուսափուկ է: Իւրաքանչիւր ոք է արժանի եթէ ոչ սիրոյ ու յարգանքի, ապա գոնէ խոր ուշադրութեան, ինչը որ արուեստագէտին յետոյ կը կանգնեցնէր իրօք սիրելի կամ իսկապէս արհամարհելի մի գոյութեան առջեւ, բայց այդ գոյութիւնը երբեք չէր վերածի* աբստրակցիայի, *քանի որ ինքը, միայն ինքը կը լինէր՝ բոլոր դէպքերում անկրկնելի: Այդ* աբստրակցիաների *ետեւը չգիտեմ շատ աւելի ինչն է կանգնած՝ իրականութեան աչքերին նայելուց վախենա՞լը, իրականութիւնը հասկանալու անկարութի՞ւնը, անառարկայ մարդասիրութի՞ւնը, անառարկայ մարդատեա-ցութի՞ւնը, թէ՞ աղայական քամահրանքը մեզ հետիոտներիս: Բոլոր դէպքերում՝ նրանք մեզ՝ օտարներիս են* աբստրահում *եւ չեն* աբստրահում *իրենց մայրերին, քոյրերին եւ իրենք իրենց: Ուրեմն՝ հայեցակէտի հարց է:*

Տասնեօթերորդ դարի թուրք ուղեւոր-աշխարհագէտ Էւլիյա Չելեպին տասն անգամ անցել ու դարձել է Հայաստանով, եւ 500 էջանոց նրա գրքում հայի մի անուն ու հայ մի անհատ չկայ – ռայաները փափլիկ են, ռայաները բարետես են, ռայաները հիւրասէր են, լաւ կերանք, լաւ խմեցինք, նուաստիս էլ երկու ստրուկ ու մի ստրկուհի հասաւ, ելանք գնացինք: Հարաւից տուել Հայաստանով Պոնտական է ելել յունական բանակի հետ Քսենոփոնը՝ ճանապարհին հայ մի անհատ չկայ – գոմերը տաք են, տաք գլխատներում հիւրասէր ժողովուրդ է բնակւում, գարեջուր խմեցինք, կարգուած ուղեցոյցը սիրուն պատանի էր, ինձ ստրուկ վերցրի: Խնդրեմ: Այնինչ՝ Չելեպիի կրտսեր եղիա Կարնեցին, նոյն էրզրումցին, որի 10–12 տարեկան պարմանիների՝ մինչեւ մօրուսաւորուելը՝ տեսքը շատ է հաւանել Չելեպիին,– այո, եղիա այն նոյն Կարնեցին այդ նոյն ժամանակ Պարսից գործերով եւ հայոց իր առաքելութեամբ Ռուսաստան էր գնացել եւ այնտեղ բանտարկուել, քանի որ դու մի ասա ոչ միայն

մարդ է, այլեւ անհատ եւ Նիժնի Նովգորոդ քաղաքում քննադատել է ցարական իշխանութիւնների ոչ-քրիստոնէավայել ընթացքը: Փառք ու պատիւ իրեն – ֆրանսացու իր յածանաւիւն կանգնած ֆրանսացու իր ապահով կեղեւի մէջ՝ զուտ քրիստոնեայի բարեգթութեամբ եւ զուտ իր մարդկային բարձր առաքինութեամբ, վտանգելով ծովակալի իր ասպարէզը, 6000 գլուխ հայ-քրիստոնեայ է փրկում ֆրանսացի ծովակալը, եւ որպէսզի գոնէ մասամբ ապացուցուի, որ նրանք հենց էնպէս 6000 թէկուզ եւ ազատասէր գլուխ չէին, այլ 6000 անկրկնելի անհատ, տառապանք, ցանկութիւն, երազ, կամք, տկարութիւն եւայլն, եւայլն՝ պիտի պահանջուէր Մուսա Լերան Յուշամատեանի խմբագրիդ, հայուդ եւ ընկերներիդ՝ դարձեալ հայերի ու բնիկ, տեղացի, մասնակից հայերիդ տարիների աշխատանքը: Այո, հայեցակէտի հարց է: Այո, ձեւի հարց չէ: Քաղաքացիական խիզախութիւն պիտի ունենալ կոմսի քո նժոյգից իջնելու եւ գոնէ հետաքրքրուելու, թէ էդ զինուորը որ մեռաւ, ռուսական տասը միլիոնանոց բանակի էդ մի կենտ զինուորը որ մեռաւ՝ ո՞վ էր, ի՞նչ էր, ինչո՞ւ էր ապրում, ինչի՞ էր կոչուած (Թոլսթոյ, «Հաճի Մուրատ»), եւ մարդկային մեծ խիղճ պիտի ունենալ կոմսի քո ապահով մահուան անկողնում հարիւրաւոր հարազատներով ու բժիշկներով ու հազարաւոր երկրպագուներով շրջապատուած՝ չմոռանալ նրանց, ովքեր մենութեան մէջ լքուած են մեռնում, «բա էն խեղճ գիւղացիներն ինչպէ՞ս են մեռնում, բա ի՞նչ են անում էն խեղճ գիւղացիները մեռնելիս»: Արդիական-ապստրաքթ, այսպէս կոչուած նորարարական *հայեցակէտն այնքան է հին, ինչքան Քսենոփոնը: Դա անտարբերութիւնն է ուրիշի վշտերին ու ուրախութիւններին: Նորարար Չարենցի պոէզիայում «Տաղարան» շարքից աւելի նոր ոչինչ եւ «պոէզօգուռնայից» աւելի հին ոչինչ ես չգիտեմ: Նոյնը՝ Թումանեանի քառեակները, նոյնը՝ Աբովեանի մասլահաթ-վէպը: Իսկ եթէ որեւէ մէկն իսկապէս նորարար է՝ նա իր համար է նորարար, չի կարելի նրա նորարարութիւնն ուղղութիւն դարձնել եւ բոլոր այսպէս թէ այնպէս օժտուածներին քշել դէպի այդ ուղղութիւն՝ թէ ահա նորի ճանապարհը, գնացէք այդ ճանապարհով: Գրականութիւնը իմ*

անկրկնելի եսի անկորուստ արտածումն է– դուք ձեր եսի արտածման եղանակը գտէք, իմ ուղին միայն իմ ուղին է – դուք ձեր ուղին գտէք:

– Ինչպէ՞ս կը մեկնաբանէք կապը գրողի եւ ընթերցողի միջեւ: Չէ՞ք խորհիր որ ուշիմ եւ հետաքրքիր ընթերցողը կարող է գրադատի դեր խաղալ գրողին համար: Ընդհանրապէս, ինչպէ՞ս կը գնահատէք հայ ընթերցողը:

– Ստեփան Զօրեանը մի սքանչելի պատմուածք ունի՝ «Ընթերցողները»: Առաջին աշխարհամարտի տարիներն են, մեր գիւղաքաղաքներից մէկի վանքի բակում «Մշակ» են կարդում ու խօսում Ճաբոնիայի, Տրիէստի ու Տրիէնտի, Կարպատների ու հազար ու մի բանի մասին, բայց թէ ինչ են ասում եւ ով է ճիշդ ու ով սխալ՝ կողքները կանգնած մի պառաւի համար ոչ հետաքրքիր եւ ոչ էլ մանաւանդ հասկանալի է– նա անընդհատ նոյն հարցն է տալիս՝ «իմ էրեխից գազէթում մի բան չկա՞յ գրած», «բա մեր էրեխիցը մի բան էլ ա գրած չի՞», «այտա տէր հայր ջան, բա մեր տղի անունը էդ անտէր թերթումը մի տեղ էլ ա չի՞ գրած»,– իսկ նրանք խօսում են դարձեալ իրենց Տրիէստի ու Տրիէնտի, Ճաբոնացիների մանրուքեան, Իտալիայի յուշագրի մասին: Հայ ընթերցողը, մենք բոլորս այդ պառաւի վիճակում ենք, թէ ինչ են գրում եւ ինչ չեն գրում աշխարհի ու մեր գրողները՝ մեզ այնքան էլ չի հետաքրքրում, մենք անընդհատ սպասում ենք մի տեղեկութիւն, մի լուր, մի այո, մի թէկուզ ոչ լսել մեր երեխայի, մեր հօր, մեր մօր՝ անհրաւուածի մեր վիճակի մասին, յոյսի մեր հեռաւոր, աղօտ, կաուչկայ շող ենք ակնկալում եւ ցանկանում ենք տեսողութեան ու լսողութեան խաբկանք համարել այն ահաւոր ոչը, որ մարդկութիւնն ու պատմութիւնը – արդէն պատմութիւնը – ասացին մեր իրաւացիութեան եւ բշնամու անհրաւութեան մասին: Մաքուր գեղարուեստի անխառն հրճուանքը մեզ անծանօթ է, դա մեծ ազգերի անհրաւուածի քոմբլեքսից *ազատ զաւակների շնորհն է (Աստուած նրանց էլ գոնէ անհրաւողի* քոմբլեքս *շնորհէր), մենք յաղթահարել ու անցնել չկարեցանք Մահարի-քաղաքագէտի դրած ցածլիկ, խախուտ, մի քացիով փլուող չնչին չափարը՝ որ իբր թէ կոչուած*

էր սահմանելու իր դաւանանքի կալուածները, վէպի տարերքն այնինչ, նրա գրողական տաղանդի չվերահսկուած տարերքն այնինչ այդ կալուածների սահմանները լայնացրել ու դարձրել էր Հայրենիք... այո, մենք չանցանք այդ ցանկապատը եւ տեսնել չկարեցանք այն բարձր գեղարուեստը եւ այդպիսով բարձր հայրենասիրութիւնը, որ կշիռ ու իրական մեծ ոգի էր տալիս «Այգեստաններին»: Սա դաժանութի՞ւն է գրողի հանդէպ, թէ՞ ընթերցողի սոսկական խեղճութիւն: Դաժանութիւն է թէ խեղճութիւն՝ այս այսպէս է: Այսպէս է, պատմութիւնը մեր գրողի եւ մեր ընթերցողի յարաբերութիւնը դարձրել է այսպիսին: Սա փոքր ազգի գրողի եւ ընթերցողի յարաբերութիւն է: Եւ ընթերցողն օժտել է իր գրողին այդ բոլոր ֆունկցիաներով եւ նրանից է ակնկալում ազգային իր բոլոր հարցերի եթէ ոչ պատասխանները, ապա շօշափումներն անպայման: Հայ գրողի համար դա այնքան էլ սարսափելի չէ, Թումանեանը եւ ուրիշները դրա օրինակը տուել են:

– Ի՞նչ վիճակ կը ներկայացնէ սովետահայ արդի թատերգութիւնը: Ինքզինք պարտադրող որեւէ երկ լոյս տեսա՞ւ վերջին տարիներուն: Նախատուեալներ կը տեսնէ՞ք հայրենի թատերգութեան յետագայ ուռճացումի մասին:

– Անշուշտ պիտի յոյս կապել Զօրայր Խալափեանի եւ Պերճ Զէյթունցեանի թատերական փորձերի հետ: Թատրոնը այնպիսի բնագաւառ է, որ մարդուց պահանջում է նրա ուժերի ամբողջական ներդրում: Ցանկալի պիտի լինէր տեսնել Զէյթունցեանին եւ Խալափեանին միայն թատրոնի մէջ, որպէսզի իրենց ուժերը լրիւ կերպով ծաղկեն:

Ժոհն Օ'Նիլի, Թեն. Ուիլիամսի, Էտ. Օլպիի եւ Սովետական Միութեան ու արտասահմանի ուրիշ մեծերի ընթերցումից յետոյ դու՝ հայորդիդ քեզ նուաստացած ես զգում քո ազգային թատրոնի մինչեւ այժմ արուած փորձերից:

Ես բիէսի մի փորձ եմ առել՝ «Չէզոք գօտի» վերնագրով, ասում եմ չի՛ յաջողուել: Կարծում եմ գոնէ մասամբ յաջողուել է: Խօսքը այդ մասին չի: Ես նկատում էի որ մեր ազգային բնոյթին յատուկ չէ ինքնացուցադրումը: Եթէ ես շատ ռէալիստ լինէի եւ ենթարկուէի

կերպարների թելադրած բնական շեշտին, իմ բոլոր հերոսներն էլ պիտի չխօսէին կամ գոնէ չխօսէին հիմնական հարցի մասին: Այդպէս գործողութիւն յառաջ մղե՞լ կրնի, այդպէս ներկայացո՞ւմ կրնի: Մեղքը գուցէ այն իրողութեան է որ ես չգիտէի ազգային մեր բնոյթը լիովին ցուցադրող ձեւ, ֆորմ: Գուցէ կը գայ մի օր որ մենք եւս կը ստեղծենք մեր ազգային բնոյթը լրիւ բացայայտող համապատասխան ձեւեր, ինչպէս, ասենք, «Մոկաց Միրզէն», «Պեպո»ն, «Անուշ»ը, «Սասնայ Ծռեր»ը, Կոմիտասի երգերը եւ այլն:

– Հանրածանօթ ըլլալով այն փաստին որ տարբեր ժողովուրդներու գրականութիւնները՝ լիարժէք երկերու փոխադարձ թարգմանութիւններով հաղորդակից կը դառնան իրարու լաւագոյն աւանդութիւններուն ու արժէքներուն հետ, այս հիման վրայ ինչպէ՞ս կը գնահատէք մեր թարգմանչական գրականութիւնը, ի նկատ ունենալով թարգմանուած հեղինակները եւ թարգմանութեանց որակը:

– Հարցադրումը լրիւ արդարացի է: Ձեր հարցի մէջ զգացուող տագնապը լիովին բաժանում եմ: Թարգմանութիւնները ուղղակի անփոյթ են: Այսօրուայ գրականութիւնից՝ չեն թարգմանուել Ֆոլքներից ոչինչ, Մարքէսից ոչինչ, Սարոյեանից շատ քիչ: Բոլորին չեմ կարող թուարկել: Շատ թուով մարդիկ կան, որոնք ունակ ձեռ ունեն: Իրենց համար գուցէ լաւ չէին գրում, լաւ հեղինակներ չեն, բայց կարող են մեծապէս օգտակար լինել թարգմանութեան մարզում, թէկուզ օգտագործելով ռուսերէնը իբրեւ միջնորդ լեզու, թէեւ նախընտրելի պիտի լիներ անշուշտ թարգմանել ուղղակի՛ բնագրից:

Ես գրող եմ: Ես ռուսերէն կարդում եմ: Թուարկածս ու չթուարկածս համաշխարհային դասական գրականութիւնը կարդացել եմ ռուսերէն, բայց ես քաղցի, օդի պակասի պէս զգում եմ այդ գրականութեան կարիքը հայերէն լեզուով: Մի նրբութիւն կայ. դարձուածքներ, հասկացողութիւն, կառուցուածքներ կան, որոնք պիտի հայերէն լինէին, որպէսզի այդ հեղինակներին ես ինձ օգնական զգայի գրողական իմ աշխատանքի մէջ:

Բանաստեղծութեան թարգմանութեան մէջ մեծ ակնկալիքներ չպիտի ունենանք, մանաւանդ որ հարուստ, իսկական պոէզիա էլ ունենք: Թարգմանութեան հատուկենտ լաւ տողերը պէտք է որպէս բախտի նուէր ընդունենք: (Փակագծի մէջ՝ իբր օրինակ բերենք Վահագն Դաւթեանի Պըրնսեան թարգմանութիւնները ռուսերէնից կատարուած): Բայց արձակի մէջ բարձրորակ թարգմանութիւն պիտի եւ՛ ակնկալենք, եւ՛ յաւակնենք ու ազգային գործունէութեան բնագաւառ դարձնենք: Դա հաւասար կը լինէր սեփական արձակ ունենալու, որովհետեւ հայերէնը կը ծաւալուէր, կը շնչէր, կը զօրանար այդ թարգմանութիւնների մէջ:

– Ի՞նչ է ձեր կարծիքը սփիւռքահայ գրականութեան մասին՝ ընդհանրապէս եւ արձակի մասին՝ մասնաւորապէս: Ինչպէ՞ս կը պատկերացնէք անոր ապագան: Սփիւռքահայ հեղինակներու կողմէ, օտար լեզուներով եւ միեւնոյն ատեն հայութեան հետ առնչութիւն չունեցող թեմաներու շուրջ երկնուած գրականութեան՝ «Սփիւռքահայ գրականութիւն» տարազը կարելի՞ է հագցնել: Կը խորհի՞ք թէ Մայր Հայրենիքը անհրաժեշտ չափով կը հետաքրքրուի սփիւռքահայ գրականութեամբ: Արձակի մէջ ի՞նչ անուններ ձեզի բան մը կ՛ըսեն:

– Սփիւռքահայ գրականութեան ամէն մի փոքր յաջողութիւնը, կենդանի մի թրթիռը, կենդանի մի շեշտն իսկ ինձ համար վիթխարի ուրախութիւն է: Ինձ համար իսկական տօն է եղել հանդիպումը Վահան Թէքէեանի, Համաստեղի, Մնձուրու, Շահան Շահնուրի հետ: Դա ի հարկէ խաբկանք է եղել, բայց ինձ թուացել է թէ ես մեծ հայրենիքի զաւակ եմ եւ իմ մեծ հայրենիքի ինձ անյայտ անկիւններում գրականութիւն է ստեղծւում: Յետոյ ի հարկէ տեսել եմ որ այդ հայրենիքը չկայ եւ սփիւռքում ստեղծուած արժէքները զուտ հեղինակների գերմարդկային ջանքերի արգասիքն են եղել: Ասում են թէ հայ լինելը բեռ է: Իսկ ես կ՛ասէի՝ հայ գրող լինելը սպանիչ բեռ է:

Լեզուական այլ կեղեւի միջից խօսող հայորդիների գրականութիւնը արդէն իրենց բառերով ասած՝ «նահանջ է... առանց երգի», իսկ ճիշդ բառերով՝ արդէն այլեւս ապահով այլ լեզուի եւ այլ

պետութեան հովանաւորութեան միջից ծեքծեքումներից ոչ ազատ նոսթալժի:

Գրականութիւնը հասարակական, տնտեսական, քաղաքական գործունէութեան բնագաւառ է, ինչպէս ասենք ինքնաթիռաշինութիւնը, ածխարդիւնաբերութիւնը, նաֆթարդիւնաբերութիւնը, աթոմի հետազօտութիւնը: Սփիւռքը ուժ պիտի ունենա՞յ նիւթապէս ապահովելու, խրախուսելու իր գրականութիւնը, իր առաւել օժտուածներին ազատելու բոլոր տեսակի այլ հոգսերից, ինչպէս որ ինքնաթիռաշինարարը միայն ինքնաթիռաշինարար է եւ աթոմագէտը միայն աթոմագէտ: Այս՝ հարցի միայն մի կողմն է: Փակագծերում ասենք, որ նոյնիսկ պետականութիւն, կերպ ու դրօշ ունեցող Հայաստան հայրենիքը դժուարանում է տանել իր մշակութային բեռը: Այս մշակոյթը ստեղծել է մի մեծ ժողովուրդ, որը յետոյ ոչնչացուել է եւ նրա մի փոքր մասը չի կարողանում իր ուսերին կրել իր ամբողջ եւ հզօր ժամանակների ստեղծած մշակոյթը: Նարեկացի ունենք, նարեկագիտութիւն՝ ոչ, Թումանեան ունենք, թումանեանագիտութիւն՝ ոչ: Մի մշակոյթ կայ, մշակոյթի մեկնաբանութիւն չկայ:

Հիմա հարցի երկրորդ կողմը: 1915 թուականին ԱՄՆի նախագահ Թէոտոր Ռուզվելթը ասաց որ իր երկրին կիսաամերիկացիներ հարկաւոր չեն: 50 տարի յետոյ հրեաների փրօֆսրայէլեան ձգտումների առիթով Լեհաստանի ղեկավարը ասաց լեհահրեաների մասին՝ մեզ կիսալեհեր հարկաւոր չեն: Ազգերը փակւում են իրենց կեղեւների մէջ, դարասկզբի աշխարհաքաղաքացիական ոգին փոքրանալով մի կողմ է քաշւում միջազգային ասպարէզից, եւ Աստուած գիտի թէ վաղուայ որ երկրում է հանդուրժուելու սփիւռքահայութեան իբրեւ հայ գոյատեւումը:

Այսքանից յետոյ սփիւռքահայ գրագէտը ուժ պիտի գտնի՞ իր մէջ առաջադրելու հայրենիքի եւ հայի ազգային իր տեսակի ի՛ր հաւատամքը: Սարոյեան պիտի ասէր՝ Աստուա՜ծ գիտի:

Տեսակի պահպանման բնազդը եւ անարգուածների դատապաշտպանը լինելու ընդվզումը պիտի այդքան զօրաւոր զինե՞ն հայ գրողին՝ գրական դիրքերի վրայ մնալու համար:

– Սիրելի Մաթեւոսեան, դուք յաջողած էք արդէն ձեր անունին շուրջ համարում եւ գուրգուրանք ստեղծել՝ իբրեւ սովետահայ ժամանակակից արձակի «ուժեղ մարդը»: Երկար տարիներէ ի վեր գրական մամուլի մէջ լոյս տեսած ձեր պատմուածքներով եւ յատկապէս վերջին շրջանին լոյս ընծայած «Օգոստոս» պատմուածքներու հաւաքածոյով հիմնաւորեցիք ձեր հնչեղ ձայնը եւ ինքնատիպ ոճը՝ ինչպէս մեր աղբիւրներն ու երկնակամարը, ջղուտ ու խոհական՝ ինչպէս մեր լեռներն ու չարքաշ բնութիւնը: Ձեր կերտած կերպարները այնքան բնորոշիչ կերպով իրենց հողին, լեռներուն ու առաքինութիւններուն կպած հայեր ըլլալով մէկտեղ, միաժամանակ մարդեր են պարզունակ, աշխատասէր եւ արդարակորով՝ իրենց խոհերով, ներաշխարհով եւ գործերով: Շատ հաճելի պիտի ըլլար ունկնդրել ձեր մտորումները, ձեր գրական դաւանանքի, սկզբունքներու եւ անցած ստեղծագործական ուղիի մասին:

– Իմ մասին ասուած քո այդ գեղեցիկ խօսքերը համարենք շատ աւելի մեր ժողովրդի մասին բարձր գրականութիւն ունենալու քո կարօտի արգասիքը: Իմ կարծիքը անձնապէս իմ մասին՝ ես քննութիւն եմ տուել եւ ընդունուել եմ գրականութիւն: Առ այժմ այդքանը: Ի՞նչ եմ անելու: Ի՞նչ եմ ուզում: Կինս է պատմել, բայց կարծես ես իմ աչքերով հազար անգամ եմ տեսել: Երեւանում Շիլաչի թաղամաս ունենք: Եղեռնից յետոյ եկել այդտեղ, այդ Շիլաչի թաղում ծուարել էր մեր էն ջախջախուած երամի մնացորդացը: Դարձեալ սէրեր էին եղել. դարձեալ ամուսնութիւններ էին եղել, մանչ զաւակներ էին ծնուել ճիշդ ժամանակին, որպէսզի 1941-ին Գերմանիոյ դէմ մղուած պատերազմի ատեն, իյնային ռազմաճակատում: Հիմա, կաւէ, քարէ այդ տներն են, Երեւանի ամառուայ քանձր շոգը. եւ գերմանացի ռազմագերիները՝ էսօր Նար-Դոսի կոչուող փողոցը բացում, սալարկում են: Մի մայր, մի պառաւ անընդհատ կանգնած էդ ռազմագերիների մօտ եւ անընդհատ լաց է լինում նրանց գերութեան վրայ, թէկուզ եւ հենց նրանց մէջ է իր որդու դահիճը: Ասում է, ամէն անգամ փոստատարը «սեւ թղթով» թաղ էր մանում եւ Շիլաչի շոգ, կաւոտ թաղի վրայ կախւում էր ծղրտոցը, յետոյ լռութիւն էր իջնում եւ

ռազմագերիները պապանձւում ու դադարում էին աշխատելուց: Նրանք էին պատերազմը սկսել, մեղաւորը նրանք էին, բայց զգո՞ւմ էին այդ մեղաւորութիւնը թաղի պոլսահայ մայրերը, չէին զգում, այդ չի կարեւորը: Ասում է, իրենց ունեցածից նրանք միշտ ճաշ էին եփում գերիների համար, նոր «սեւ թուղթ» ստանալու օրը միայն նրանք խռովում ու ճաշ չէին տալիս գերմանացիներին: Նրանց վրէժը միայն դա էր: Իսկ մեր մայրերի սիրոյ չափը միայն ես ու դու՝ հայերս գիտենք:

Մեր անկրկնելի, մեր մեծ, մեր մարդասէր, մեր անոխակալ, մեր Աստծոյ չափ բարի կերպարը եթէ ես կարողանամ գոնէ մի քիչ սեւեռել գրականութեան մէջ, գրողական աշխատանքով իմ զբաղումը ես մի քիչ արդարացուած կը համարեմ:

Երբեմն ինքնագոհութեան պահեր եմ ունեցել իմ արածի համար, գովեստների հաւատացել եմ, բայց ամէն անգամ կեանքին դառնալիս՝ քրտնելով տեսել եմ որ իմ արածը չնչին է, ոչինչ է այն մեծ կերպարի առջեւ որ հայ է կոչւում: Ի՛նչ կ'ուզէք համարէք, բայց ես վստահ եմ որ եթէ երբեւէ միաւորուած ազգերի որեւէ կազմակերպութիւն հարկ համարի համաշխարհային խղճի սէմպոլ կերպար ստեղծել, այդ կերպարը, սէմպոլը պիտի ստեղծի հայ մարդու, հայ գիւղացու կերպարով եւ պէտք է կանգնեցուի հայոց հողում: Որպէսզի հասկանալի լինի թէ ինչ կերպարի մասին է խօսքը, յիշատակեմ առաջին հերթին Վահան Տէրեանի «Երկիր Նայիրի» շարքը.

«Այնպէս անխինդ եմ եւ նըման լացին
Երգերն իմ երկրի, այնպէս տխրագին.
Մեզ չի՛ հասկանայ օտարերկրացին,
Մեզ չի՛ հասկանայ սառն օտարուհին»:

Այդ կերպարի ցոլքերը, յաճախ աղօտ, յաճախ մի քիչ, կան Մնձուրու, Համաստեղի եւ Բակունցի գործերում:

– Ինչպէս կ'ընմբռնէք կապը գրաքննադատութեան եւ գեղարուեստական գրականութեան միջեւ: Ըստ ձեզի, մեր գրադատութիւնը յաջողապէս կը կատարէ՞ իր «մեսիան»:

– Ամերիկացի երիտասարդ գրագէտ եւ քննադատ Թոմ Ուուլֆ, ապսթրաքսիոնիզմի պարագլուխներ Գլեմընք Կրենպէրկի եւ Հերըլտ Ռոզէմպէրկի մասին խօսելով, նրանց տաքտիքական կոպիտ սխալն է համարում այն, որ նրանք միանգամից կանգնում են բոլ արթ շարժման դէմ: Ուուլֆը ասում է. «դա Կրենպէրկի վիթխարի սխալն է: Կրենպէրկը որ իր ժամանակին առաջադրել էր մոտէրնիզմի ճշգրիտ կարգախօսը՝ «իւրաքանչիւր նորարարութիւն սկզբում այլանդակութիւն է թւում», պէտք է հասկանար որ աւանկարտիզմի ժամանակներում ոչ մի արուեստաբան է ի վիճակի ճակատային գրոհով նոր ոճի ճանապարհը փակել, քանի որ ինք կը յայտարարուի հնացած, ոչ ժամանակակից եւ դէն կը շպրտուի հրապարակից: Աւանկարտիզմի ժամանակներում քեզ համար ատելի նոր ոճի դէմ պայքարի միակ միջոցը նրա վրայից թռիչքային անցումն է դէպի առաջ եւ քու այդ յառաջապահի դիրքից ցոյց տալը այն անդունդը, դէպի ուր շարժում է նոր ոճի հոսանքը: Կրենպէրկը ուշ հասկացաւ որ պէտք է այդպէս վարուէր»:

Ես կողմնակից եմ այս ձեւի քննադատութեան: Թող իմ քննադատները իմ նայած ուղղութեամբ ինձնից աւելի հեռուն տեսնեն եւ ցոյց տան այդ հեռաստանի ներկայացրած վտանգը կամ ապահովութիւնը: Մինչեւ հիմա իմ քննադատներից շատ քչերն են խօսել իմ շահերից, իմ ներսից եւ լայնացրել իմ տեսադաշտը: Գրաքննադատութիւնը ինքը անմիջապէս գրականութիւն չի ստեղծում, կարող է գրականութեան համար բացառիկ նպաստաւոր պայմաններ ստեղծել:

Իմ հայեացքով, մեզանում մինչեւ հիմա այդպիսի մի փաստ է միայն եղել՝ Հրանդ Թամրազեանի «Խմբապետ Շաւարշ»ի վերլուծութիւնը:

– Մեր վերջին հարցումը: Ի՞նչ նոր ծրագիրներ ունիք: Ներկայիս ի՞նչ գործի վրայ կ'աշխատիք: Լայնաշունչ վէպ գրելու մասին չէ՞ք մտածեր: Վերջապէս, մօտերս նոր հատորով մը հանդէս գալու մտադրութիւն չունի՞ք:

– Վերջերս լոյս տեսաւ իմ «Ծառերը» ժողովածուն: Արդէն կիսատ վիճակի մէջ երկու վէպ ունեմ՝ «Նանա իշխանուհու

կամուրջը», երկրորդին վերնագիրը գուցէ «Ծմակուտ» լինի: Հիմա ձեռքիս տակ աշխատում եմ «Մեռելալոյս» պայմանական խորագրով մեծ վիպակի վրայ: 120 էջ գրել եմ, կերեւի մի այդքան էլ պիտի լինի: Ծրագիրներս շատ են, ֆիզիքական կարողութիւններս քիչ: Հազիւ հասկացել եմ ի՞նչ է գրականութիւնը: Ինչպէս մեր ժողովրդական երգի մէջ է ասւում, հազիւ գտել եմ «երգիս առարկան»: Բաղձանքս է որ ֆիզիքական, մարմնական մեծ կարողութիւն ունենայի, իրականութիւն դարձնելու համար իմ տեսիլներս:

Մ. ՎԻԳԷՆԵԱՆ

«Կանչ» (Բեյրութ), 14,21,28.04.1979 թ.